Հայաստանի ռազմական հզորությունը և զորահավաքային ներուժը*

ԳԱՅԱՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀՀ Պաշտպանության նախարարության Պաշտպանական ազգային հետազոտական համալսարան

Հոդվածում Հարավային Կովկասի պետությունների օրինակով ուսումնասիրվել է պետության ռազմական հզորության հիմնախնդիրը, զորահավաքային ներուժի կարևորությունն ու ազդեցությունը ռազմական հզորության դրսևորման և պետության առաջ ծառացած անվտանգային խնդիրների լուծման տեսանկյունից: Այդ նպատակով նախ վերլուծվել ու ներկայացվել են պետության ռազմական հզորության բնորոշման ու գնահատման տարբեր մոտեցումներ, ապա առաջարկվել է գնահատման նոր մեթոդաբանություն, որի օգնությամբ էլ գնահատվել և համեմատվել են Հարավկովկասյան պետությունների ռազմական հզորությունները: Հայաստանի առնչությամբ հարցն առավել մանրամասնորեն դիտակվել է նաև զորահավաքային ներուժի իրացման դիտանկյունից՝ հայ-ադրբեջանական պատերազմի նոր իրողությունների հաշվառմամբ: Հայաստանում զորահավաքային գործընթացի առանձնահատկությունները քննարկվել են 12 փոխկապված ուղղություններով՝ իրավական լիազորություններ, ֆինանսներ, շրջակա միջավայր, տրանսպորտ, մարդկային ռեսուրսներ, նյութական միջոցներ և սարքավորումներ, շինություններ, արտադրական բազա, կրթական բազա, առողջապահական ծառայություններ, հեռահաղորդակցություն, դաշնակից պետությունների օգնություն:

Բանալի բառեր
Պետության ընդհանրական հզորություն, պետության ռազմական ներուժ, պետության ռազմական հզորություն, զորահավաքային (մոբիլիզացիոն) ներուժ,

Նախաբան

Ժամանակակից աշխարհում, ճիշտ այնպես ինչպես մարդկության պատմության ամբողջ ժամանակահատվածում, պետությունների ռազմական հզորությունների համեմատական գնահատականն է պայմանավորել տարբեր երկրների միջև համագործակցային ու

---

* *Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝ 19T-5B12 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:*

դաշնակցային հարաբերությունների հաստատումն ու խորացումը, ինչպես նաև՝ միմյանց հետ հակամարտելու ու խաղաղություն հաստատելու որոշումների կայացումը։ Հայտնի ռազմավարական պոստուլատներից մեկը պնդում է, որ աշխարհում գոյություն ունեցող պոտենցիալ ռազմական սպառնալիքների տիրույթի ձևավորման հիմքում ոչ միայն չբավարարված (կամ վնասված) կենսական շահերն են, ինչը հանգեցնում է քաղաքականության սուբյեկտների միջև հարաբերությունների սրմանը, այլ նաև դրանց *ռազմական հզորությունների* հարաբերակցությունը։ Մասնավորապես, կարելի է պնդել, որ

ՌՍ= (ՀՌՀ$_1$/ՀՌՀ$_2$) X Մ$_1$,

որտեղ ՌՍ-ն ռազմական սպառնալիքն է, ՀՌՀ$_1$-ը և ՀՌՀ$_2$-ն համապատասխանաբար առաջին և երկրորդ երկրների համախառն ռազմական հզորություններն են, Մ$_1$-ը առաջին երկրի ռազմական ուժ կիրառելու մտադրությունն է։

Ըստ բանաձևի՝ պետություններից մեկը կարող է ռազմական սպառնալիք ստեղծել մեկ այլ պետության համար, եթե իր համախառն ռազմական հզորությունը գերազանցում է հնարավոր հակառակորդի համախառն ռազմական հզորությունը։ Ընդ որում, կարևոր է նաև ռազմական ուժ կիրառելու մտադրության առկայությունը, անկախ այն հանգամանքից, թե այդ մտադրությունը չափելի լինելու դեպքում, մեծ է, թե փոքր։ Այսպես օրինակ, երկու պետությունների համախառն ռազմական հզորությունների միջև տարբերությունը կարող է լինել անգամ 100-ապատիկ, սակայն առավել հզոր պետությունը երբևէ որևէ մտադրություն չունենա ռազմական ուժ կիրառել ավելի թույլի նկատմամբ։ Մինչդեռ հնարավոր է նաև, որ ռազմական ուժ կիրառելու մտադրություն ունեցողն այդ քայլին դիմի նույնիսկ այն դեպքում, երբ իր ռազմական հզորությունը հակառակորդինը գերազանցի թեկուզ մի փոքր։

Սեպտեմբերի 27-ին Արցախում Ադրբեջանի ռազմական ագրեսիան այս պնդման ևս մեկ ապացույց է։ Սակայն, որպես կանոն, ագրեսորը զինված հարձակման պլան կազմում և իրացնում է այն ժամանակ, երբ վստահ է, որ պատերազմի ժամանակ իր ծախսերը զգալիորեն ավելի ցածր կլինեն սպասվող օգուտներից։ Այս տեսանկյունից, Ադրբեջանի նախաձեռնած պատերազմը մանրակրկիտ

հաշվարկների արդյունք էր: Անշուշտ, պետության հզորության բարձր մակարդակը հաճախ կարևոր է հաղթանակի հասնելու համար, սակայն հակամարտող կողմերի հզորությունների համեմատական գնահատման ժամանակ «գնահատման չենթարկվող» գործոնների ազդեցությունն այնքան կարևոր է, որ կարող է վճռել պատերազմի ելքը: Հայաստանի համար նման գործոն միշտ եղել է արագ համախմբվելու և բոլոր ուժերը հանուն հայրենիքի մոբիլիզացնելու ունակությունը: Նման գործոնների ազդեցության թեկուզ մոտավոր գնահատումը հաճախ կարող է հետ պահել ագրեսորին իր պլանների իրականացման գաղափարից: Ըստ ամենայնի, այս անգամ Ադրբեջանը և Թուրքիան գնահատել էին նույնիսկ այդ գործոնի ազդեցության սահմանները:
Սույն հետազոտության շրջանակներում ներկայացվելու է, թե ինչ գործոններով է պայմանավորված պետության ռազմական հզորությունը և ինչպես կարելի է այն գնահատել: Առաջարկվելու է պետության ռազմական հզորության գնահատման նոր մեթոդաբանություն և փորձ է արվելու գնահատել Հարավային Կովկասի պետությունների ռազմական հզորությունները:

Պետության ռազմական հզորության գնահատումը

Պետության ռազմական հզորությունը, որը պայմանավորված է բազմաթիվ գործոններով, հաճախ դժվար չափելի հասկացություն է: Ըստ RAND կորպորացիայի հետազոտությունների, այն պետք է ընկալել երեք հարթություններում.

- առկա ռեսուրսներ և հնարավորություններ կամ փաստացի գոյություն ունեցող հզորություն (power-in-being),
- ինչպես է այդ հզորությունը կերպափոխվում ազգային գործընթացների,
- ինչ արդյունքների է հանգեցնում հզորությունը կամ թե ո՞ր պետությունն է գերակայում կոնկրետ իրավիճակներում[1]:

Պետության ռազմական հզորության այս բնորոշումը ռուսական մոտեցումների հետ համեմատելիս կարելի է նկատել, որ իրականում

[1] **Gregory F. Treverton, Seth G. Jones,** Measuring National Power, *Conference Proceedings, RAND corporation, National Security Research Division,* p. IX.

արևմտյան ու ռուսական մոտեցումների միջև էական տարբերություն չկա։ Օրինակ, Բոգդանովը պետության ռազմական հզորությունը բնորոշում է որպես տնտեսության նյութաարտադրական հնարավորությունները և հասարակության հոգևոր ուժերը *մոբիլիզացնելու ունակություն՝* պատերազմի կանխարգելման կամ հնարավոր ագրեսիային հակազդելու նպատակով[2]։ Ստացվում է, որ պետության ռազմական հզորության ամենակարևոր շերտը ոչ թե պետության հարստությունն է (ռեսուրսները և հնարավորությունները), այլ անհրաժեշտության դեպքում դրանք մոբիլիզացնելու և պետության առաջ տվյալ պահին դրված խնդիրները լուծելու ունակությունը, այսինքն՝ ճիշտ ռազմավարության առկայությունը[3]։ Հզոր պետություններին հաջողվում է կերպափոխել իրենց տրամադրության տակ եղած նյութական ռեսուրսներն առավել կարևոր գործիքների՝ օրինակ ռազմական գերակայության, ընդ որում դրան հնարավոր է հասնել քաղաքական կամքի, ազգային ոգու և հասարակության սոցիալական միասնության ճանապարհով։ Սակայն աշխարհաքաղաքական ազդեցության տեսանկյունից ամենակարևորը՝ «արդյունքներում արտացոլված հզորությունն է», այսինքն՝ անկախ ռեսուրսների ու հնարավորությունների առկայությունից, դրանց փոխակերպման գործընթացներից, ինչ շահեր ու օգուտներ է տվյալ պետության համար ապահովել աշխարհում իր հզորությունը։ Ինչ խոսք, սա ռազմական հզորության առավել դժվար ընկալելի, պայմանական ու հարաբերական շերտն է[4]։

Մինչև 21-րդ դարի սկիզբը պետության ռազմական հզորության չափման մոտեցումներում այնուամենայնիվ, առկա են մի քանի պարամետրեր, որոնք սուբստանցի դեր են կատարում պետության հզորությունը բնորոշելիս։ Դրանք են՝ պետության տարածքը, բնակչության թվաքանակը, համախառն ներքին արդյունքը և ռազմական ծախսերը։ Օրինակ, Քեմբրիջի համալսարանի պրոֆեսոր Գերման Կլիֆորդը հենց այս պարամետրերով է չափում

---

[2] **Богданов С. А.,** Экономическая составляющая военной безопасности, *Военная мысль,* 2004, 12, 13.

[3] **Boudon R., Bourricaud F**., *A Critical Dictionary of Sociology,* Chicago: University of Chicago Press, 1989, p. 267.

[4] **Gregory F. Treverton, Seth G. Jones**, նշվ. աշխ.

պետությունների ռազմական հզորությունը, իհարկե, դրանք լրացնելով, այսպես կոչված, «միջուկային հնարավորությունների գործակցով[5]»: Նմանապես Դեյվիդ Սինգերը թվարկված պարամետրերը պարզապես դիտարկում է կարճաժամկետ (ռազմական ծախսեր և զինված ուժերի թվաքանակ), միջնաժամկետ (արտադրական գործունեություն) և երկարաժամկետ (բնակչության թվաքանակ և ուրբանիզացման մակարդակ) հեռանկարներում պետության ռազմական հզորության վրա ազդեցության տեսանկյունից[6]: Իսկ Ռեյ Քլայնն այդ չորս հիմնական պարամետրերը լրացնում է սուբյեկտիվ գործոնով՝ ազգային ռազմավարության առկայությամբ և դրանով նախատեսված նպատակներին հասնելու կամքի գործակցով[7]: Ժամանակի ընթացքում «ազգային հզորության» նոր բանաձևեր են առաջարկվել, դրանցում ներառելով նոր փոփոխականներ՝ ազգային ոգին ու բնույթը, միասնությունը, պետական կառավարման որակը, արդյունավետ դիվանագիտությունը և այլն, որոնք դժվարությամբ են ենթարկվում էմպիրիկ չափումների և գնահատականի[8]:

Ներկայումս պետության հզորության անկյունաքարի ընկալումները էապես փոխվել են: «Պետության հզորության չափումները հետարդյունաբերական դարաշրջանում» աշխատության[9] հեղինակներն արդարացիորեն ազգային հզորության իրական հիմքերը տեսնում են նորարարություններին հակվածության, սոցիալական ինստիտուտների նկատմամբ վստահության և գիտելիքահենք տնտեսության որակների մեջ: Այս գործոնները պետության ռազմական հզորության գրավականն են՝ բյուրեղացնելով պետության հզորության գործիքակազմի բոլոր տարրերի փոխկապված ներգործությունը:

---

[5] **German F. Clifford,** A Tentative Evaluation of World Power. *Conflict Resolution,* 1960**, IV,** 1, 138-144.

[6] **Singer D., Small M.,** The Wages of war, 1816–1965: A Statistical Handbook**.** American Political Science Association 1975, **69,** 1, pp. 390-391.

[7] **Ray S. Cline,** The Power of Nations in the 1990s: A Strategic Assessment. University Press of America, 1994, Business & Economics.

[8] **Рукавишников В.,** Насколько сильна Россия? (Комментарий к геополитическому дискурсу), *СоцИс.: Социологические исследования,* 2007, 10, 26–37.

[9] **Ashley J. Tellis et al.,** Measuring National Power in the Postindustrial Age. Analyst's handbook. 2000.

Մեկ այլ հետազոտություն բացահայտել է, որ ռազմական տեսանկյունից առավել հզոր պետությունները (որոնց ռազմական հզորությունը գնահատվել է պատերազմի նախօրյակին) կարողացել են հաղթել պատերազմների կեսից քիչ դեպքերում, մինչդեռ առավել թույլ հակառակորդներին հաջողվել է հաղթանակի հասնել դեպքերի 2/3-ում[10]: Նման հետազոտությունները վկայում են, որ նույնիսկ ամենալավ մշակված բանաձևերով հնարավոր չէ ստանալ պետության հզորության այնպիսի գնահատական, որը հնարավորու-թյուն կտա բարձր հավանականությամբ կանխատեսել հնարավոր պատերազմի ելքը: Միշտ գոյություն ունեն ազգային ուժերի մոբիլիզացմանը նպաստող կամ խոչընդոտող գործոններ, որոնք դրսևորվում են միայն իրական պատերազմի ժամանակ: «Ոչ այնքան հզոր երկրների» հաղթանակները փաստող վիճակագրության մեկ այլ կարևոր պատճառ է այն, որ մեթոդաբանական տեսանկյունից պետության հզորությունը պայմանավորող գործոնները ոչ մի կերպ չեն կարող դիտարկվել որպես միմյանց փոխարինող[11], ուստի, դրանց համադրումը միևնույն չափման սանդղակով և մեկ բանաձևում կարող է հանգեցնել ոչ այնքան վստահելի գնահատականների:

Հետազոտության մեթոդաբանությունը

Պետության ռազմական հզորության առավել համապարփակ գնահատման համար անհրաժեշտ է ընտրել գործոնների այնպիսի համախումբ, որ հնարավոր լինի նկարագրել, թե՛ առկա ռեսուրսներն ու հնարավորությունները, թե՛ դրանց փոխակերպման գործընթացը վերջնական արդյունքների և թե՛ հենց վերջնական արդյունքները: Այլ կերպ ասած, անհրաժեշտ փոփոխականները բովանդակային իմաստով պետք է արտացոլեն պետության ընդհանրական հզորությունը, ռազմական ներուժը և ռազմական հզորությունը, որոնք

[10] **Wayman F., Singer D., Goertz G.,** Capabilities, Allocations, and Success in Militarized Disputes and Wars, 1816–1976, *International Studies Quarterly,* 1983, **27**, 497–515.

[11] **Harold and Margaret Sprout,** *Man-Milieu Relationship Hypotheses in the Context of International Politics,* Center for International Studies, Princeton University Research Monograph. Princeton, NJ: Princeton, 1956, pp. 39–49.

միմյանց հետ փոխկապակցված են Գծապատկեր 1-ում ներկայացված ձևով:

Գծապատկեր 1



Փոփոխականների նման հավաքածուի ձևավորման համար կողմնորոշիչ է հանդիսացել Ինտեգրալ հզորության գլոբալ վարկանիշը, որը գնահատվում էր մինչև 2012 թվականը Ռազմավարական կառավարման միջազգային լիգայի, Ապագայի հետազոտման միջազգային ակադեմիայի և Տնտեսական ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի փորձագետների համատեղ ջանքերով[12]: Այդ վարկանիշի գնահատման համար օգտագործվել են հետևյալ պարամետրերը՝ *պետական կառավարման համակարգ, տարածք, բնական ռեսուրսներ, բնակչություն, տնտեսություն, մշակույթ և կրոն, գիտություն և կրթություն, Զինված ուժեր, արտաքին քաղաքականություն (աշխարհաքաղաքական դիրքավորում)*: Սույն հետազոտության շրջանակներում օգտագործելու համար պարամետրերի այս հավաքածուն որոշ չափով ձևափոխվել է՝ փորձելով ընտրել հնարավորինս չափելի փոփոխականներ, սակայն պահպանելով համա-

[12] Глобальный рейтинг интегральной мощи 100 стран. Доклад-2012 к обсуждению. 3- е издание, переработ. и дополн. М., Международная Академия исследований будущего, Институт экономических стратегий, 2012,108 с.

պարփակության սկզբունքը: Միաժամանակ, ներկայացվել են նաև այն ցուցանիշները, որոնք հնարավորություն կտան գնահատել փոփոխականների արժեքները վերոնշյալ երեք մակարդակներում: Պետության ռազմական հզորության գնահատման համար ընտրված պարամետրերը և դրանց համապատասխանող ցուցանիշները բերված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Պետության ռազմական հզորությունը նկարագրող ցուցանիշների համակարգը

Պարամետր	*Ընդհանրական հզորությունը նկարագրող ցուցանիշ*	*Ռազմական ներուժը գնահատող ցուցանիշ*	*Ռազմական հզորությունը գնահատող ցուցանիշ*
Տնտեսական	ՀՆԱ	ԲՏ, ՏՏ և մեքենաշինական արտադրանքի բաժինը ՀՆԱ-ում	Ռազմարդյունաբերական արտադրանքի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում
Ռազմական	Ռազմական ծախսեր/ՀՆԱ	ՍՈՏ-ով ապահովվածությունը	Միավոր կենդանի ուժին բաժին ընկնող ռազմական ծախսեր
Քաղաքական	Պետության ինտեգրվածության աստիճանը ռազմաքաղաքական միավորումներում	Միջազգային (կոլեկտիվ) անվտանգության ապահովման համաձայնագրերի առկայությունը	Միջազգային պայմանագրերով սահմանված պայմանների երաշխավորված իրականացումը գործընկերների կողմից
Մշակութային-կրոնական.	Պետության ներդրումը համաշխարհային մշակույթում	Բնակչության կառուցվածքն ըստ կրոնական և ազգային պատկանելության	Ազգային և կրոնական փոքրամասնությունների տեսակարար կշիռը Զինված ուժերում
Բարոյահոգեբան.	Բարեկեցության և երջանկության ինդեքսներ	Հայրենասիրության ինդեքս	Դասալիքների ինդեքս
Գիտատեխ.	Պետական բյուջեում ԳՀՓԿԱ ծախսերի տեսակարար կշիռը	Երկրների նորարարությունների ինդեքսը	Ռազմական ծախսերում ԳՀՓԿԱ ծախսերի տեսակարար կշիռը
Աշխար-	Տարածքի և բնական ռեսուրսների	Ռազմավարական նշանակության	Ռազմավարական նշանակության

հա-գրա.	պաշարների ցուցանիշներ	հումքային ռե-սուրսներ	հումքի վերամշակ-ման հնարավորութ.
Պե-տա-կան կա-ռավա-ռում	Հասարակության սոցիալ-քաղաքա-կան միասնության ինդեքս	Պետական կառա-վարման որակի համաշխարհային ինդեքս	Ռազմաքաղաքա-կան իշխանություն-ների նկատմամբ վստահության աս-տիճանը

Պետության ռազմական հզորության յուրաքանչյուր պա-րամետր կարող է գնահատվել 10-բալային համակարգով, սակայն պետության ընդհանրական հզորության գնահատականը պետք է կումուլյատիվ մեծություն լինի՝ ներառելով պետության ռազմական հզորության և պետության ռազմական ներուժի ցուցանիշները: Իր հերթին պետության ռազմական ներուժի ցուցանիշը պետք է կումուլյատիվ մեծություն լինի՝ ներառելով պետության ռազմական հզորության ցուցանիշը: Իհարկե, պետության ռազմական հզորությունը նկարագրող հիմնական պարամետրերը գնահատելու համար գոյություն ունեն նաև մի շարք կարևոր հանգամանքներ (ազգային առանձնահատկությունները, զինվորական անձնակազմի բարոյահոգեբանական կերպարների տարբերությունները, երկարա-ժամկետ ռազմավարական նպատակներին հասնելու քաղաքական կամքի դրսևորումը և այլն), որոնք սակայն, չափելի չեն և չէին կարող ներառվել ցուցանիշների համակարգում: Այնուամենայնիվ, նման մոտեցումը հնարավորություն կտա համեմատել ոչ միայն պետություն-ների ընդհանրական հզորությունները, այլ նաև՝ որպես իրական ռազմական հզորություն, դրանց իրացման հնարավորությունները: Մյուս կողմից, պետության ռազմական հզորության գնահատման վերը բերված ցուցանիշները թեև չափելի են, սակայն անհնար է սույն հոդվածի շրջանակներում դրանց ճշգրտությունը գնահատել, քանի որ դրանց վերաբերյալ վիճակագրական տվյալները գաղտնի են և չեն հրապարակվում: Այդ հանգամանքը հաշվի առնելով, նպատակա-հարմար է նշված պարամետրերը դիտարկել որպես հնարավոր արդյունք, և առանձին ուսումնասիրել այդ արդյունքին հասնելու համար գործընթացի՝ մոբիլիզացիայի առանձնահատկությունները:

Հարավային Կովկասի պետությունների ռազմական ներուժների համեմատական վերլուծություն

Աղյուսակ 2-ում ներկայացված են Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի համար պետության ընդհանրական հզորությունը պայմանավորող ցուցանիշները 10-բալային համակարգով:

Աղյուսակ 2. Պետության ընդհանրական հզորության ցուցանիշները

Ցուցանիշ	*Հայաստան*	*Վրաստան*	*Ադրբեջան*
Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ (2019)[13]	4 622.7 / 2.5	4 769.2 / 2.6	18 148.2 / 10
Ռազմական ծախսեր/ՀՆԱ (2019)[14]	4.9% / 10	2.0% / 4.0	4.0% / 8.2
Ինտեգրվածություն[15]	22 / 4.7	31 / 6.6	47 / 10
Պետության ներդրումը համաշ. մշակույթում[16]	4500 / 10	3000 / 6	100 / 1
Բարգավաճման[17] *և երջանկ. ինդեքսներ*[18]	116-րդ / 9	117-րդ / 8.8	89-րդ / 10
	61-րդ / 8.5	53-րդ / 10	92-րդ / 2.6
ԳՀՓԿԱ ծախսերի ցուցանիշ[19]	63.7մլն դոլ/1.8	59.2 մլն դոլ/ 1.7	356.2 մլն դոլ/10
Տարածք և բնական	29,7 / 3.4	57,1 / 6.9	82.6 / 10

[13] https://data.worldbank.org/indicator/GB.XPD.RSDV.GD.ZS (15.10.2020)
[14] www.sipri.org (15.10.2020)
[15] Հետազոտվող երկրների Պաշտպանության նախարարությունների պաշտոնական կայքեր. www.mil.am, https://mod.gov.ge/en/page/40/bilateral-defence-cooperation, https://mod.gov.az/ru
[16] ՅՈՒՆԵՍԿՕ-ի տվյալների շտեմարան՝ http://www.unesco.org/new/ru/unesco/resources/publications/unesdoc-database/ (16.10.2020)
[17] The Legatum Prosperity Index-2019. (13th Edition)
[18] World Happiness Report-2020. https://happiness-report.s3.amazonaws.com/2020/WHR20.pdf (16.10.2020)
[19] http://uis.unesco.org/apps/visualisations/research-and-development-spending/ (16.10.2020)
[20] Բնական պաշարների գնահատման համար օգտագործվել է բնական ռեսուրսներից ստացվող ռենտայի ցուցանիշը ՀՆԱ-ի նկատմամբ՝ տոկոսներով, որը հաշվարկում է Համաշխարհային բանկը՝ https://data.worldbank.org/indicator/NY.GDP.TOTL.RT.ZS (16.10.2020)

պաշարներ[20]	6.6% / 2.3	0.8% / 0.3	29,6% / 10
Հասարակության միասնության ցուցանիշ[21]	0.76 / 10	0.57 / 7.5	0.43 / 5.6

Լրացուցիչ մեկնաբանությունների կարիք ունեն «պետության ներդրումը համաշխարհային մշակույթում» ցուցանիշի տվյալները: Որոշ դեպքերում դրանք ներկայացվում են ՅՈՒՆԵՍԿՕ-ի տվյալների շտեմարանում[22] ընդգրկված նյութական և ոչ նյութական ժառանգության տվյալների հիման վրա, սակայն ակնհայտ է, որ դրանք չեն կարող արտացոլել իրական պատկերը: Այդ դեպքում առավելագույն միավոր կստանա Ադրբեջանը, որին ինչ-որ կերպ հաջողվել է այդ շտեմարանում գրանցել 16 անուն նյութական և ոչ նյութական ժառանգություն, մինչդեռ Հայաստանն այդ շտեմարանում ներկայացված է ընդամենը 9, իսկ Վրաստանը՝ 7 անուն մշակութային ժառանգությամբ: Սակայն դեռևս 2013 թվականից ի վեր բացահայտվել են բազմաթիվ դեպքեր, որոնք վկայել են Ադրբեջանի կողմից ՅՈՒՆԵՍԿՕ-ի տարբեր պաշտոնյաներին կաշառելու մասին[23]: Միաժամանակ, ակնհայտ է, որ անհեթեթ կլինի համաշխարհային մշակույթի մեջ ներդրում համարել միայն գրանցված նմուշները: Ակնհայտ է, որ ավելի քանի 4500-ամյա պատմություն ունեցող հայ (ըստ պատմահայր Խորենացու՝ մ.թ.ա. 2492 թվականից) և վրաց (վրացիների՝ որպես ազգի ձևավորման սկիզբ է համարվում մ.թ.ա. I հազարամյակը) ժողովուրդները պարզապես չէին կարող ավելի քիչ մշակութային ժառանգություն ունենալ, քան ընդամենը 100-ամյա պատմություն ունեցող ազգը, որն ինքն էլ դեռևս մինչև վերջ իր ազգային ինքնությունը չի ճանաչել: Հայտնի է, որ ադրբեջանցի ազգության մեջ միավորված են տարբեր տեղանուններ ու ցեղանուններ

---

[21] Հասարակության սոցիալ-քաղաքական միասնության գործակիցը հաշվարկված է ըստ Ա.Ի. Բուրավլյովի առաջարկած մեթոդի՝ **Буравлев А.И.,** "К вопросу об оценке военно-экономического потенциала государства", *Вооружение и экономика,* 3(40), 2017, с. 78-97:

[22] Աղբյուրը՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի տվյալների շտեմարան՝ http://www.unesco.org/new/ru/unesco/resources/publications/unesdoc-database/ (16.10.2020)

[23] Տես օրինակ՝ OCCRP: Азербайджан потратил на взятки европейцам 2,9 млрд долларов | Украинская правда (pravda.com.ua) (11.22.2020)

կրող ցեղախմբեր՝ այրումներ, փաղարներ, շահսևաններ, ջինլիներ, ջուանշերների, շամշադիլներ, ազերիներ, թուրքեր և այլն։ Սակայն նշված ցեղերի ու ցեղախմբերի ուծացմանը զուգընթաց Ադրբեջանը հետևողականորեն իրականացրել է նաև դավանական ու մշակութային ուծացում, յուրացնելով իր տարածքում պատմականորեն ապրող ժողովուրդների ու ցեղերի բազմաթիվ մշակութային տարրեր։ Ուստի, օգտագործվել է այլ մոտեցում՝ համաշխարհային մշակույթի մեջ երկրների ներդրումը գնահատելով ըստ տիտղոսակիր ժողովուրդների մշակութաստեղծ գործունեության ժամանակահատվածի։

Գծապատկեր 2-ում ներկայացված են Հարավային Կովկասի պետությունների համեմատական ընդհանրական հզորությունները։

Գծապատկեր 2.



Դժվար չէ նկատել, որ ընդհանրական հզորությամբ Հարավային Կովկասում առաջատարն Ադրբեջանն է, ընդ որում բազմաթիվ պարամետրերով (տարածքի մեծություն, բնական պաշարներ, մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ, ԳՀՓԿԱ-երին հատկացվող ծախսեր և այլն) բացարձակ առաջատարն է: Սակայն, ինչպես արդեն նշվել է, պետության ռազմական հզորությունը պայմանավորված է առավելապես այն հանգամանքով, թե որքանով պետությանը կհաջողվի իր ընդհանրական հզորությունը տրանսֆորմացնել ռազմական ուժի, ուստի կարևոր է նաև պետության ռազմական ներուժի գնահատումը: Վերջինս նկարագրող ցուցանիշները բերված են Աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3

Ցուցանիշ	*Երկիր*		
	Հայաս-տան	*Վրաս-տան*	*Ադրբեջան*
ԲՏ, ՏՏ և մեքենաշինական արտա-դրանքի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում[24] *(2018)*	5% / 2.6	9% / 4.7	19% / 10
ՍՌՏ-ով ապահովվածությունը	1330/3.9	1450/ 4.3	3358 / 10
Միջազգային (կոլեկտիվ) անվ-տանգության համաձայնագրեր	4 /6.7	2 / 3.3	6 / 10
Բնակչության կառուցվածքն ըստ կրոն. և ազգ. պատկանելության	0.129/10	0.447/2.1	0.187 / 6.5
Հայրենասիրության ինդեքս	72%/8.5	76%/8.9	85% / 10
Նորարարությունների ինդեքս[25]	32.6 /10	31.8/9.7	27.2 / 8.3
Ռազմավարական նշանակության հումքային ռեսուրսներ	1.5	3.8	10
Պետական կառավարման որակի համաշխարհային ինդեքս	55 / 7.4	74 / 10	32 / 4.3

Հաշվի առնելով այն, որ «ՀՆԱ-ում ԲՏ, ՏՏ և մեքենաշինական արտադրանքի տեսակարար կշիռ» պարամետրի համար ընտրված երեք պետությունների համար համադրելի ցուցանիշներ գտնելը

[24] https://data.worldbank.org/indicator/NV.MNF.TECH.ZS.UN (17.10.2020)
[25] https://www.globalinnovationindex.org/Home (17.10.2020)

բավական դժվար էր, որպես համարժեք ցուցանիշ ընտրվել է ՄԱԿ-ի Արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO) «Արդյունաբերական արտադրանքում միջին և բարձր տեխնոլոգիական արտադրանքի տեսակարար կշիռ» ցուցանիշը[26]: Ինչ վերաբերում է ՍՌՏ-ով ապահովվածությանը, ապա այն հաշվելու համար օգտագործվել են Պետությունների ռազմական ուժի համաշխարհային ինդեքսի[27] ենթացուցանիշներից միայն սպառազինությունների ու ռազմական տեխնիկայի քանակական ցուցանիշները, իսկ բուն ռազմական հզորությունը հաշվելու համար՝ մեկ միավոր ակտիվ կենդանի ուժին բաժին ընկնող ՍՌՏ ցուցանիշը: Հատկանշական է, որ թեև նշված ինդեքսի համաձայն Ադրբեջանը տարածաշրջանում ամենամեծ ռազմական ուժն ունի՝ աշխարհում զբաղեցնելով 64-րդ տեղը, այն դեպքում, երբ Վրաստանը 89-րդն է, իսկ Հայաստանը՝ 111-րդում, այնուամենայնիվ, մեկ միավոր ակտիվ կենդանի ուժին բաժին ընկնող ՍՌՏ-ով Ադրբեջանը զիջում է թե Վրաստանին, թե Հայաստանին: Բնակչության էթնիկական և կրոնական կառուցվածքի գնահատման համար օգտագործվել է էթնիկական ու կրոնական միատարրության գործակիցների թվաբանական միջինը[28]:

Հայրենասիրության ինդեքսը ներկայացվել է Gallup Միջազգային ասոցիացիայի փորձագետների՝ 2018 թվականին իրականացրած հետազոտության համաձայն, ըստ որի Հարավային Կովկասի երեք ճանաչված պետություններն էլ ներառված են ամենահայրենասեր բնակչություն ունեցող պետությունների քսանյակի մեջ. Ադրբեջանը 85% ցուցանիշով աշխարհում 6-րդն է, Վրաստանը՝ 76% ցուցանիշով՝ 9-րդը, իսկ Հայաստանը՝ 72% ցուցանիշով՝ 15-րդը[29]: Իհարկե, սոցիոլոգիական հարցումները գիտական եզրահանգումների համար չեն կարող հիմք հանդիսանալ: Օրինակ, ադրբեջանցիներն իրականում

---

[26] https://data.worldbank.org/indicator/NV.MNF.TECH.ZS.UN (17.10.2020)

[27] https://www.globalfirepower.com/country-military-strength-detail.asp?country_id=armenia

[28] **A. Alesina, E. Coochie Ferrera** (2005). "Ethnik Diversity and Economic Performance", *Journal of Economic literature, pp 762-800,* Retrieved December 15, 2016.

[29] **Kinah J.,** The Most Patriotic Countries in the World. May, 2018, https://www.worldatlas.com/articles/the-most-patriotic-countries-in-the-world.html (19.10.2020)

վերջին պատերազմական գործողություններին լայն ներգրավվածություն չունեին: Հայտնի փաստ է, որ այդ պատերազմում Ադրբեջանի կողմից առաջնագծում հիմնականում կռվում էին սիրիացի ահաբեկիչների խմբավորումներ:

Ռազմավարական նշանակության հումքային ռեսուրսներով երկրների ապահովվածության մակարդակը գնահատելու համար համեմատվել են երեք երկրների ապահովվածությունը վառելիքաէներգետիկ ռեսուրսներով, գունավոր և հազվագյուտ մետաղներով, թանկարժեք քարերով և մետաղներով, ինչպես նաև՝ ջրային պաշարներով: Այդ տվյալների աղբյուրը IndexMundi վիճակագրական կայքն է[30]՝ ընդհանրական գնահատականով:

Պետական կառավարման որակի գնահատականները աշխարհի 200 երկրների համար հաշվում և ամեն տարի հրապարակում է Համաշխարհային բանկը[31]:

Ուսումնասիրվող պետությունների ռազմական ներուժի համեմատությունը ներկայացված է Գծապատկեր 3-ում:

Գծապատկեր 3.



[30] https://www.indexmundi.com/ (19.10.2020)
[31] https://info.worldbank.org/governance/wgi/ (20.10.2020)

Արդեն նշվել է, որ ցանկացած պատերազմի ելքն իրականում վճռվում է ռազմական ներուժի մոբիլիզացման հնարավորություններով, որն էլ ձևավորում է պետության *իրական ռազմական հզորությունը*։ Պետք է նկատել, որ ռազմական հզորության ցուցանիշներն դժվարությամբ են քանակական չափման ենթարկվում, քանի որ հաճախ անկանխատեսելի է, թե իրականում ինչպիսի շահերով կառաջնորդվեն գործընկերները, ովքեր միջազգային պայմանագրերով պարտավորություններ են ստանձնել։ Մյուս կողմից երկրները հաճախ չեն հրապարակում ռազմական ծախսերում ԳՀՓԿԱ ծախսերի իրական տեսակարար կշիռը, կամ դրանց մի մասն իրականացնում են երկակի նշանակության արտադրություններում։ Չեն հրապարակվում նաև ՀՆԱ-ում ռազմա-արդյունաբերական արտադրանքի տեսակարար կշռի մասին վիճակագրական տվյալներ։ Դասալքության մասին տվյալները հիմնված են լինելու տարբեր փորձագետների տեսակետների ու հազվադեպ պաշտոնական հրապարա-կումների վրա, որոնք ոչ միշտ կարող են արտահայտել ամբողջական պատկերը։ Եվ ի վերջո, պետություններից յուրաքանչյուրն ունի մոբիլիզացիոն այնպիսի ռեսուրսներ, որոնք յուրահատուկ են հենց այդ երկրին, և կարող են մեծացնել պետության ռազմական հզորությունը միայն իրական անվտանգային խնդիրների ժամանակ։ Հայաստանի համար այդպիսին կարելի է համարել, օրինակ, Սփյուռքն իր մարդկային ու ֆինանսական ներուժով։ Ադրբեջանի համար հիմնական «անվտանգության բարձիկը» 40 մլրդ դոլարանոց «Նավթային ֆոնդն» է։ Այս հանգա-մանքներով պայմանավորված ռազմական հզորության գնահատականը նշված ցուցանիշներով անհնար կլինի ներկայացնել։ Ուստի, կգնահատվի, թե իրականում ռազմական ներուժի մոբիլիզացման ինչպիսի հնարավորություններ են եղել Հայաստանում, և որքանով էին դրանք արդյունավետ պատերազմի ժամանակ։

Զորահավաքային գործընթացի առանձնահատկությունները Հայաստանում

Ըստ ԱՄՆ-ի «Համատեղ հրապարակում 4-05» փաստաթղթի, ռազմական մոբիլիզացիան պահանջում է 12 փոխկապված

ուղղություններով ռեսուրսների հավաքագրում և կազմակերպում՝ իրավական լիազորություններ, ֆինանսներ, շրջակա միջավայր, տրանսպորտ, մարդկային ռեսուրսներ, նյութական միջոցներ և սարքավորումներ, շինություններ, արտադրական բազա, կրթական բազա, առողջապահական ծառայություններ, հեռահաղորդակցություն, դաշնակից պետությունների օգնություն[32]: Նշված ուղղություններով ռազմական մոբիլիզացիայի պատշաճ կազմակերպումը ցանկացած պետության հաջողության գրավականն է հնարավոր պատերազմի ժամանակ: Նկատենք, որ Հայաստանում զորահավաքի գործընթացին և զորահավաքային նախապատրաստությանն առնչվող տեղեկատվությունն ընդհանուր հասանելի չէ, հետևաբար Հայաստանի վերաբերյալ այս առնչությամբ վերլուծությունները հիմնվում են նշված ուղղություններով առկա իրավիճակի վերաբերյալ ընդհանուր դատողությունների վրա:

Արտակարգ իրավիճակներում *իրավական լիազորությունների* վերաբաշխման ճիշտ պլանավորումն առանցքային նշանակություն ունի, քանի որ միայն պաշտոնատար անձանց լիազորությունների հստակ սահմանման պարագայում է հնարավոր գործի դնել մոբիլիզացիայի համակարգի մյուս օղակներն այնպես, որ համակարգն աշխատի ժամացույցի ճշգրտությամբ և արդյունավետ լինի խնդիրների լուծման տեսանկյունից: Լիազորությունների վերաբաշխումը պետք է տեղի ունենա ձևավորված արտակարգ իրավիճակների բարդության աստիճանի համապատասխան: Հայաստանում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները և դրանց առանձնահատկությունները ռազմական դրության պայմաններում սահմանվում են «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքով: Ըստ այդ օրենքի, ռազմական դրության իրավական ռեժիմի ապահովման կազմակերպման գործընթացը ղեկավարում է ՀՀ կառավարությունը՝ սահմանելով առանձին միջոցառումները և ժամանակավոր սահմանափակումներ և վերահսկելով դրանց իրականացման գործընթացը: Միաժամանակ, կառավարությունն է որոշում ընդունում ռազմական դրության պայմաններում ՀՀ զինված

[32] Joint Publication 4-05. Joint Mobilization planning. 23 October, 2018. pp. IV-2, (42).

ուժերի և այլ զորքերի, քաղաքացիական պաշտպանության ու արտակարգ իրավիճակների պետական լիազոր մարմնի ուժերի կիրառման մասին՝ սահմանելով նրանց խնդիրները: Իսկ «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ պատերազմ հայտարարվելու դեպքում որպես զինված ուժերի գերագույն հրամանատար հանդես է գալիս հանրապետության վարչապետը: Հատուկ ուշադրության է արժանի այն հանգամանքը. որ ռազմական դրության իրավական ռեժիմ կարող է կիրառվել ոչ միայն պատերազմ հայտարարվելու դեպքում, այլև զինված հարձակման և դրա անմիջական վտանգի դեպքում: Կարելի է ենթադրել, որ եթե գործում է ռազմական դրության իրավական ռեժիմ, բայց չկա հայտարարված պատերազմ, ապա Զինված ուժերի անմիջական ղեկավարը մնում է ԶՈՒ ԳՇ պետը, իսկ Զինված ուժերը ղեկավարվում է պաշտպանության նախարարը: Օրենքն այս հարցը կարգավորում է Հոդված 9-ի 3-րդ մասով. «ռազմական դրություն հայտարարված տարածքում պատերազմական գործողություններ իրականացվելու դեպքում օրենքով նախատեսված միջոցառումների իրագործումը ՀՀ կառավարության որոշմամբ կարող է վերապահվել զինվորական կառավարման մարմիններին»: Սակայն պետք է նկատել, որ օրենքը չի տարանջատում ռազմական գործողություններ և պատերազմական գործողություններ հասկացությունները, ինչը լրացուցիչ թյուրըմբռն-ման տեղիք է տալիս: Վերոնշյալ երկու օրենքները իրավական լիազորությունների բաշխման հստակեցման առումով լրամշակման կարիք ունեն:

Ֆինանսավորման հարցերը գրեթե միշտ առանցքային նշանակություն ունեն մոբիլիզացման ժամանակ: Չկանխատեսված ռազմական գործողությունների ժամանակ պետությունը պետք է կարողանա անհրաժեշտ ծավալով և ժամկետներում ֆինանսավորում ապահովել: Դա պահանջում է հավանական ծախսերի ճիշտ կանխատեսում, ինչպես նաև՝ այլ ոլորտների վրա հնարավոր ազդեցության օբյեկտիվ գնահատական: Ամենայն հավանականությամբ անհրաժեշտ կլինի բյուջետային ծախսերը վերաբաշխել ի նպաստ ռազմական ծախսերի: Հայաստանում բյուջետային ծախսերի կառուցվածքը մոբիլիզացիոն ներուժի տեսանկյունից ուժեղ չէ: Պաշտպանությանը հատկացվող ծախսերը մեծությամբ երրորդն են

պետության ընդհանուր ծախսերի կառուցվածքում (16.7%), այն դեպքում, երբ առաջին տեղում սոցիալական պաշտպանության ծախսերն են (26.2%), որոնք կրճատելը պատերազմական իրավիճակում նպատակահարմար չէ, իսկ երկրորդ տեղում ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների համար ծախսերն են (19.5%), որոնք փաստացի պետական ապարատի պահպանման ծախսերն են: Պահուստային ֆոնդերին հատկացվում է բյուջետային ծախսերի ընդամենը 0.3%: Սակայն արտակարգ իրավիճակներում (այդ թվում նաև՝ պատերազմական) ծագած խնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսավորման կարևոր առանձնահատկություններից մեկը Սփյուռքի ֆինանսական ներուժի օգտագործումն է: Ինչպես ցույց տվեց հայ-ադրբեջանական նոր պատերազմը, աշխարհի հայերը շատ կարճ ժամանակահատվածում՝ 10 օրում կարողացան հավաքագրել ավելի քան 120 մլն ԱՄՆ դոլար, այսինքն՝ Հայաստանի մեկ տարվա ռազմական ծախսերի մոտ 15%-ի չափով գումար: Փոքր են նաև պետական պարտքի ներգրավման հնարավորությունները, քանի որ պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը 2019 թվականին կազմել է 55%, իսկ արտաքին պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը՝ 42%, որոնք կարելի է համարել վտանգավոր սահման վարկունակության գնահատման տեսանկյունից:

Հաջորդ գործոնը, որն անհրաժեշտ է հաշվի առնել պետության մոբիլիզացիոն պատրաստության ժամանակ դա *շրջակա միջավայրի* վրա ազդեցությունն է: Սպառազինություններ և ռազմական տեխնիկան, նույնիսկ դրանց ճիշտ շահագործման դեպքում էական բացասական ազդեցություն կարող են ունենալ մարդկանց և շրջակա միջավայրի և հանգեցնել անձնակազմի մոտ հիվանդությունների տարածմանը և տարածքի բնապահպանական հավասարակշռության խախտմանը: Զորամասերի կենսագործունեությունը, դրանց առաջնահերթ խնդիրների իրագործումն անհամատեղելի է շրջակա միջավայրի պահպանության հետ: Ուստի, մոբիլիզացիոն պատրաստության ժամանակ պետք է հաշվի առնել ոչ միայն զորամասերի ու դրանց անձնակազմի մարտական պատրաստականության մակարդակը, այլ նաև՝ շրջակա միջավայրի պահպանումը մշտական տեղակայման վայրերում, վարժանքների անցկացման շրջաններում և

զորավարժարաններում (հատկապես ծանր զրահատեխնիկայի)։ Փոքր տարածք ունեցող պետությունների համար, որոնք չունեն ռազմավարական խորություն, բավական դժվար է կանխարգելել հնարավոր ռազմական գործողությունների բացասական ազդեցությունն էկոլոգիական միջավայրի վրա, ինչը լրացուցիչ խնդիրներ է ստեղծում, թե՛ անմիջապես ռազմական գործողությունների ժամանակ՝ նկատելիորեն խոչընդոտելով դրանց արդյունավետությանը և թե՛ դրանից հետո:

Մոբիլիզացիայի գործընթացի հաջող կազմակերպումը մեծապես պայմանավորված է *տրանսպորտային ենթակառուցվածքներով*։ Վերջիններս անհրաժեշտ են Զինված ուժերի բացազատման, ապատեղակայման, ապահովման համակարգի անխափան աշխատանքի, ինչպես նաև՝ անմիջական ռազմական գործողությունների աջակցման համար։ Տրանսպորտային ռեսուրսներ ասելով պետք է ի նկատի ունենալ ավիացիոն, երկաթգծային, ավտոմոբիլային, խողովակաշարային և նավահանգստային բոլոր ակտիվներն ու հնարավորությունները, որոնք մոբիլիզացիայի գործընթացում ապահովում են ռազմական կարիքների համար տեխնիկայի, նյութական միջոցների և մարդկային ուժի տեղաշարժն անհրաժեշտ կետեր (տեղակայված թե ռազմական գործողությունների թատերաբեմում և թե դրանից դուրս)։ Տրանսպորտային ենթակառուցվածքների առումով նույնպես Հայաստանը լրջագույն խնդիրներ ունի ապահովելու տրանսպորտային գործող ցանցի կազմակերպված, փոխգործակցված աշխատանքը։ Միաժամանակ, փոքր տարածքի պատճառով ռազմավարական խորության բացակայությունը պատերազմի ժամանակ խիստ խոցելի է դարձնում ռազմական մատակարարումների համակարգը։ Պատերազմը ցույց տվեց նաև, որ խնդիրները բավական լուրջ են նաև արտաքին տրանսպորտային ցանցի առումով, քանի որ նույնիսկ հումանիտար նշանակության բեռնափոխադրումների համար խոչընդոտներ էին ստեղծվում ոչ միայն թշնամական Թուրքիայի, այլ նաև Վրաստանի կողմից, իսկ Իրանի տարածքով բեռնափոխադրումների անարգելության մասին շրջանառվող տեսակետները պաշտոնական աղբյուրներով չեն հաստատվել։ Փաստորեն, երկարատև պատերազմի ժամանակ լրացուցիչ

սպառազինությունների ու ռազմական տեխնիկայի ներմուծման անհրաժեշտության դեպքում պետությունը ունենալու է բացարձակ շրջափակման խնդիր:

Մարդկային ռեսուրսների մոբիլիզացման ժամանակ ամենակարևոր խնդիրը, որը պետք է հաշվի առնվի, քաղաքացիական և ռազմական անձնակազմի միջև մարդկային ռեսուրսների ճիշտ բաշխումն է, որը կապահովի տնտեսության անխափան աշխատանք նույնիսկ պատերազմական գործողությունների ժամանակ: Մարդկային ռեսուրսների համալրման համար կարող են օգտագործվել պահեստազորի, ռազմական թոշակառուների, այլ ուժային կառույցների ներկայացուցիչների և կամավորականների հնարավորությունները: Ընդ որում, բավական կարևոր է, որ այս բոլոր կատեգորիաների անձանց ներգրավումը ռազմական գործողությունների մեջ կանոնակարգվի իրավական հիմքերով: Դա նաև թույլ կտա հավաքի դեպքում ավելի կազմակերպված ու նպատակային օգտագործել մարդկային ռեսուրսների ներուժը: Մարդկային ռեսուրսները Հայաստանի ռազմական հզորության ամենախոցելի (թվաքանակի առումով) բաղադրիչն է, բայց միաժամանակ ռազմական գործողությունների հաջողության ամենակարևոր գրավականը (որակի, հմտությունների ու ռազմարվեստին տիրապետելու առումով): Հայտնի է, որ Հայաստանի պատմության բոլոր փուլերում ռազմական գործողությունների ժամանակ որոշիչ դերակատարում են ունեցել աշխարհազորայինները: Դժբախտաբար, աշխարհազորի կազմավորման նախագիծը ԱԺ է ներկայացվել բոլորովին վերջերս, թեև դրա մասին խոսվում էր դեռևս 2016թ-ի ապրիլյան պատերազմից հետո: Մոբիլիզացիայի ժամանակ պահեստազորի և աշխարհազորայինների, կամավորական սփյուռքահայերի՝ ռազմական գործողություններին ներգրավման ոչ բավարար կանոնակարգվածությունն ու կազմակերպվածությունը 2020թ. ադրբեջանաթուրքական ագրեսիայի ժամանակ ցույց տվեց, թե որքան կարևոր էր ժամանակին այդ ուղղությամբ ավելի լուրջ զբաղվելը:

Նյութական միջոցների և սարքավորումների մոբիլիզացման գործընթացը ներառում է ռազմական բնույթի մատակարարման բոլոր ուղղությունները՝ զորամասերում տեղակայված սարքավորումները,

ռազմական գործողությունների թատերաբեմում օգտագործվող սարքավորումները և տեխնիկան, ռազմական պահուստները, նախապես տեղակայված սարքավորումները, դրանց տեխնիկական սպասարկման համար անհրաժեշտ նյութական միջոցները, ինչպես նաև՝ արտադրական բազայի թողարկման հնարավորությունները: Որպես լրացուցիչ հնարավորություններ, որոնք կարող են մոբիլիզացվել պատերազմի ժամանակ հաշվի են առնվում նաև տեղական և օտարերկրյա արտադրողներից գնելու հնարավորությունները: Այս առնչությամբ աշխատանքները պետք է իրականացվեն երկու ուղղություններով՝ ապահովել առկա նյութական միջոցների և սարքավորումների հասանելիությունը ռազմական գործողությունների ժամանակ և հաղթահարել տարբեր վայրերում դրանց անբավարարության խնդիրը՝ հաստատված առաջնահերթությունների համապատասխան վերաբաշխման ճանապարհով: Հայաստանի համար հիմնական խնդիրներից մեկը նյութական միջոցների և սարքավորումների մատակարարման անխափանության ապահովումն է, որը զգացվեց արդեն պատերազմի 20-րդ օրվանից: Ընդ որում, դա պայմանավորված էր առաջին հերթին նեղ արտադրական բազայի առկայությամբ և տեխնոլոգիական առանձնահատկություններով, որոնք թույլ չեն տալիս արագորեն արտադրել բոլոր տեսակի նյութական միջոցներն ու սարքավորումները: Բացի այդ, կտրուկ սահմանափակվեցին այլ երկրներից Հայաստան ռազմական նշանակության արտադրանքի ներմուծման հնարավորությունները:

Ռազմական նշանակության շինությունների (օբյեկտների) ճիշտ տեղաբաշխումը և դրանց նպատակային օգտագործումը պետության ռազմական խնդիրները լուծելու համար նույնպես մոբիլիզացիոն գործընթացի բաղադրիչն են: Պաշտպանական գերատեսչության կողմից ամենատարբեր տիպի շինություններ են օգտագործվում անձնակազմի տեղակայման, վարժանքների, բժշկա-կան սպասարկման, ռազմական բազաների տեղակայման, սարքավորումների տեխնիկական սպասարկման, պահեստային տարածքների և գործողությունների իրականացման համար: Այդ նպատակով պետությունը զորահավաքի ժամանակ կարող է օգտագործել ինչպես մասնավոր կազմակերպությունների սեփականության հանդիսացող շինություն-

ներ, այնպես էլ պետական պահուստային, չօգտագործվող հզորությունները: Հնարավոր է նաև կարճ ժամանակահատվածում նոր շինությունների կառուցում անմիջապես ռազմական գործողություններին առավել մոտ տարածքներում: Մոբիլիզացիայի այս բաղադրիչը կարևորվում է հատկապես լոգիստիկ համակարգի աշխատանքն ավելի արդյունավետ դարձնելու, ինչպես նաև անձնակազմի հանգստի, առողջության պահպանման և վերականգման, զինամթերքի ապահով պահեստների և դրանց մատակարարման անընդհատությունն ապահովելու համար: Ժամանակակից պայմաններում նոր տեխնոլոգիական լուծումները, մասնավորապես 3D տպագրությունը, թույլ են տալիս բավական արագ լուծել ռազմական նշանակության նոր շինությունների կառուցման հարցը: Պետք է նկատել, որ Հայաստանում մոբիլիզացիոն նախապատրաստության ժամանակ ռազմական նշանակության շինությունների պահանջարկին ճկուն արձագանքման մեխանիզմները, դրանց ապահովման համար իրավական հիմքերը նույնպես դեռևս բավարար չափով մշակված չեն:

Մոբիլիզացիայի գործընթացի պլանավորումը ենթադրում է, որ պետք է հաշվի առնել առաջին հերթին *արտադրական բազայի* ընդլայնման և արագացված արտադրության կազմակերպման հնարավորությունը պատերազմական իրավիճակում: Ընդ որում, պետք է հաշվի առնվեն ոչ միայն պետական, և մասնավոր արտադրական ձեռնարկությունների հնարավորությունները, այլ նաև արտասահմանյան այն ընկերություններինը, որոնք արտադրում են տարբեր մասեր, զինամթերք, և հանդիսանում են հիմնական սարքավորումների և սպառազինությունների բաղադրիչների միակ մատակարարները: Արտադրական հնարավորությունների գործարկման ճիշտ պլանավորումը հաճախ հաղթանակի ամենակարևոր գրավականն է: Այն նաև էական ազդեցություն ունի այլ մոբիլիզացիոն ռեսուրսների բաշխման վրա: Մասնավորապես անհրաժեշտ է հաշվի առնել և պլանավորել ազգային տնտեսության քաղաքացիական ոլորտներից լրացուցիչ բարձրորակ աշխատուժի ներգրավման հնարավորությունը, իսկ փոքրաթիվ մարդկային ռեսուրսներ ունեցող երկրներում մոբիլիզացիայի արդյունքում կարող է հավաքագրվել նաև արտադրական ոլորտում կարևոր զբաղվածություն ունեցող

աշխատուժը: Անարդյունավետ կարող են բաշխվել նաև նյութական միջոցների և պատրաստի արտադրանքի պահուստները, սարքավորումները, տրանսպորտը և շինությունները, եթե նախապես ճիշտ չի կանխատեսվել ու պլանավորվել արտադրական բազայի ընդլայնման սահմանները և այն ռեսուրսները (այդ թվում նաև՝ ֆինանսական), որոնք պետք է ուղղորդվեն դրան: Ակնհայտ է, որ այն երկրները, որոնք կարող են ապահովել պատերազմական իրավիճակի պահանջմունքներին համապատասխան արտադրական բազայի ընդլայնում և համապատասխան ռեսուրսների վերաբաշխում, չեն կարող համարժեք արձագանքել պատերազմի մարտահրավերներին: Առավել ևս այն երկրները, որոնց ռազմական բնույթի պահանջ-մունքների զգալի մասը բավարարվում է ներմուծման հաշվին, կարող են բախվել անհաղթահարելի խնդիրների պատերազմական իրավիճակում: Պետք է արձանագրել, որ Հայաստանի տնտեսությունը չունի բավարար արտադրական կարողություններ կամ հմտություն-ներ՝ պատերազմական իրավիճակում ռազմական բնույթի պահանջ-մունքներին համարժեք ընդլայնվելու համար, ինչը նույնպես էական ազդեցությունն ունեցավ պատերազմի ելքի վրա:

Մոբիլիզացիայի պայմաններում զինված ուժերի համալրման համար չափազանց կարևոր է *կրթության կազմակերպումն* այն անձանց համար, ովքեր նախկինում զինվորական ծառայության մեջ չեն եղել: Առանց կազմակերպված *կրթական բազայի* և վերապատրաստման հիմնավորված ծրագրի մարդկային ռեսուրսների մոբիլիզացման գործընթացը դատապարտված է տապալման, քանի որ հավաքագրված մարդկային ուժը չի կարող օգտագործվել նպատակային և արդյունավետ: Նման խնդիրներից խուսափելու համար անհրաժեշտ է, որ պաշտպանական գերատեսչությունը նախապես պայմանագրային ու ծրագրային համաձայնություններ ունենա տարբեր ռազմաուսումնական հաստատությունների հետ: Նոր պատերազմը ցույց տվեց, որ պատերազմական գործողություններին մարդկային ուժի տարերային ներգրավումն առանց հատուկ ռազմական պատրաստության դասընթացների ու առանց կազմա-կերպված ստորաբաժանումներում նրանց ներառման ոչ միայն նպաստ չբերեց Զինված ուժերին, այլ ինչ-որ իմաստով նույնիսկ խնդիրներ

ստեղծեց կազմակերպված զինված ուժերի համար իրենց առաջադրված խնդիրները լուծելիս: Ժամանակակից աշխարհում տարերային, չկազմակերպված, ժամանակակից սպառազինությունների ու ռազմական տեխնիկայի տիրապետելու ունակություններ չունեցող կամավորականների նույնիսկ չափազանց մեծաքանակ ներկայությունը չի կարող վճռել և ոչ մի պատերազմի ելք:

Մոբիլիզացիոն նախապատրաստության ամենակարևոր բաղադրիչներից է նաև պատերազմական իրավիճակում *առողջապահական ծառայությունների* մատուցման կազմակերպումն այնպես, որ հնարավոր լինի լրիվ ծավալով բժշկական օգնություն ապահովել պատերազմական գործողություններից տուժած քաղաքացիական բնակչությանը, զինվորականներին, ընթացիկ ստացիոնար բուժում ստացող հիվանդներին: Պետք է հաշվի առնել, որ պատերազմական իրավիճակում առողջապահական համակարգը նույնպես պետք է ընդլայնվի: Անհրաժեշտություն կառաջանա ծավալելու բժշկական ծառայությունների մատուցման շրջիկ կայաններ, որոնք կարող են բժշկական օգնությունը ցուցաբերել անմիջապես ռազմի դաշտում կամ դրան մոտ տեղակայված առավել անվտանգ կետերում: Միաժամանակ, ռազմական բժշկության ու բուժակության վերապատրաստման դասընթացների կազմակերպման անհրաժեշտություն կարող է առաջանալ, ինչը դարձյալ պետք է կանխատեսվի և պլանավորվի մոբիլիզացիոն նախապատրաստության փուլում: Միայն հիվանդանոցային մահճակալների թվի և դրանց հավանական պահանջարկի կանխատեսումների վերաբերյալ տեղեկատվության արտացոլումը մոբիլիզացիոն պլաններում, դեռևս չի կարող բավարար համարվել այս ուղղությամբ աշխատանքների պատշաճ կազմակերպման համար: Առողջապահական անվտանգության ապահովման բոլոր գործոնների մանրամասն ուսումնասիրության բացակայությունը, ինչպես նաև՝ գոյություն ունեցող բացասական իրողությունների (ինչպիսին է, օրինակ, կորոնավիրուսային համավարակը) անտեսումը հանգեցրել էր նրան, որ ճիշտ չէր գնահատվել առողջապահական համակարգի սպասվող ծանրաբեռնվածությունը և չէին մշակվել ժամանակակից պատերազմներին համահունչ ռազմի դաշտում բժշկական որակյալ օգնություն ցուցաբերելու մեխանիզմներ:

Հեռահաղորդակցական ռեսուրսների կենտրոնացված ու համակարգված օգտագործումը ի շահ պետության անվտանգության պատերազմի բարենպաստ ելքի կարևոր գրավականն է: Առավել հաճախ հեռահաղորդակցական համակարգի աշխատանքի ապահովումն ամբողջապես իր վրա է վերցնում պետությունը՝ մասնավոր ընկերությունների հետ համաձայնության գալով: Օրինակ, Ադրբեջանում նախապատրաստված պատերազմի ամենակարևոր միջոցառումներից մեկը հեռահաղորդակցության սահմանափակումն էր (որը նաև ենթադրում էր որոշակի տեղեկատվական սահ-մանափակում) սեփական բնակչության համար: Պատերազմող երկրում կապի և հեռահաղորդակցության ռազմավա-րական նշանակությունը, պատերազմը սկսվելուց անմիջապես հետո Արցախի Հանրապետությունում նույնպես որոշում կայացվեց կապի կառավարումը դարձնել պետական: Այնուամենայնիվ, տեղեկատ-վական պայքարի բավական կարևոր հատվածում հայկական կողմերը ձախողվեցին, ինչի արդյունքում բնակչության շրջանում երկբևեռ բացասական զարգացումները՝ մի կողմից ուժեղացած խուճապային տրամադրությունները, մյուս կողմից իրավիճակից էապես տարբերվող պաշտոնական տեղեկատվության հետևանքով իրականությունից կտրվածությունը բացասական ազդեցություն ունեցան բանակի մարտունակության և պատերազմի ելքի վրա:

Դաշնակից պետությունների աջակցությունը մարդկային ռեսուրսների, սպառազինությունների, սարքավորումների, տարբեր ծառայությունների տրամադրման տեսքով կարող է նկատելիորեն փոխհատուցել ռազմական ռեսուրսների նկատմամբ պահանջարկի աճը ռազմական դրության պայմաններում: Սակայն ռազմական աջակցության պլանավորումը մոբիլիզացիոն միջոցառումներում պետք է իրականացվի վստահության պայմաններում, որ դաշնա-կիցներն անպայմանորեն կիրականացնեն դաշնակցային պայմանա-գրերով ստանձնած պարտավորությունները՝ որպես պաշտպանական և դիվանագիտական գերատեսչությունների համագործակցված աշխատանք: Եթե ինչ-որ մի օղակում անհամապատասխանություն առաջանա այս երկու գերատեսչությունների աշխատանքում, ապա բացասական հետևանքները կարող են անշրջելի լինել: Խոսքը դարձյալ

վերաբերում է հատկապես փոքր երկրներին, որոնք տարածաշրջանային անվտանգային մարտահրավերներին դիմակայելու այլ տարբերակ չունեն, քան հզոր պետությունների հետ դաշնակցային հարաբերությունների հաստատումը: Հնարավոր չէ արտաքին քաղաքականության վեկտորն ուղղել մի կողմ և ռազմական աջակցություն ակնկալել այլ կողմից՝ հղում անելով դաշնակցային հարաբերություններին, որոնց ամրապնդման համար դիվանագիտական դաշտում քայլեր, ըստ էության, չեն իրականացվում: Եթե հակառակորդի դաշնակից պետությունները՝ Թուրքիան և Պակիստանը, գործուն և անթաքույց աջակցություն ցուցաբերեցին Ադրբեջանին, ապա Հայաստանի ռազմավարական դաշնակից Ռուսաստանը զգուշավոր էր այս հարցում՝ հիմնավորելով, որ ռազմական գործողությունների թատերաբեմը ոչ թե Հայաստանն է, այլ չճանաչված Լեռնային Ղարաբաղը: Սակայն Ռուսաստանը պատերազմին միջամտելու կարևոր պատճառներ ուներ՝ Սիրիայից ահաբեկչական խմբավորումները ներաթափանցումը տարածաշրջան կանխելու համար[33]: Ռուսաստանը գոնե կարող էր ազդեցությունն օգտագործել արցախա-ադրբեջանական նոր պատերազմն ավելի վաղ դադարեցնելու համար, երբ հայկական կողմի մարդկային ու տարածքային կորուստներն այնքան էլ մեծ չէին[34]:

Եզրակացություն

Թեև ընդհանրական հզորությամբ Հայաստանն Ադրբեջանին զիջում է 1.5 անգամ, այնուամենայնիվ ռազմական ներուժի առումով այդ տարբերությունն ավելի փոքր էր՝ 1.3 անգամ: Երկրների ընդհանրական հզորությունների տարբերություններն իրենց օբյեկտիվ պատճառներն ունեն, մասնավորապես Ադրբեջանը, ածխաջրածնային ռեսուրսների

---

[33] ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հարցազրույցը ռուսաստանյան «ТАСС» լրատվական գործակալությանը. https://tass.ru/interviews/9752357 (19.10.2020)

[34] Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանի նամակը ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինին. https://armeniasputnik.am/karabah/20201023/25034257/arayik-harutyunyany-namake-grel-vladimir-putinin.html (23.10.2020)

զգալի պաշարների շնորհիվ կարողացել էր մեծ ֆինանսական միջոցներ ուղղել ռազմական և ԳՀՓԿԱ ծախսերի համար։ Սակայն նույնիսկ նման տարբերության դեպքում կարելի էր նկատելի բեկում մտցնել պատերազմական գործողությունների ելքում։ Առաջին հերթին անհրաժեշտ էր ճիշտ հաշվարկել ու դիվանագիտորեն ճիշտ օգտագործել դաշնակցային հարաբերությունների ներուժը, ինչը Ադրբեջանը կարողացավ անել լիովին՝ ներգրավելով Թուրքիային, իսկ Հայաստանը ձախողեց՝ ակնհայտորեն հայտնվելով ուժերի անհավասար հարաբերակցության իրավիճակում։ Քանի որ փոքր երկրների պարագայում, որոնք չունեն սեփական զարգացած ռազմարդյունաբերություն, պետք է կարողանան ամեն կերպ ապահովել սպառազինությունների մատակարարումների անընդհատությունը պատերազմի ժամանակ։ Այդ մատակարարումների դադարեցումը անխուսափելիորեն պատերազմի վերջը պիտի լիներ՝ անբարենպաստ ելքով։

Սակայն, 44 օր ձգվող պատերազմի հիմնական պատճառներից մեկը ոչ պատշաճ կերպով կազմակերպված մոբիլիզացիոն գործընթացն էր, դրա նախապատրաստական ժամանակահատվածում բազմաթիվ կարևոր գործոնների անտեսումը, սեփական ուժերի ու հնարավորությունների ոչ համապարփակ գույքագրումը և ռազմական ռեսուրսների ոչ ճիշտ վերաբաշխումը պատերազմական իրավիճակում։ Իհարկե, պետությունը կարող է ունենալ մեծ ռազմական ներուժ, սակայն դրա մոբիլիզացման անկարողության պատճառով, այդ ներուժը լիարժեք չօգտագործել պատերազմական իրավիճակում և հետևաբար պատերազմի արդյունքները կլինեն ոչ նպաստավոր։ Մյուս կողմից, փոքր ռազմական ներուժ ունեցող պետությունները կարող են կրիտիկական իրավիճակներում *ռազմական ներուժն ամբողջապես վերածել ռազմական հզորության,* և վճռել պատերազմի ելքը հօգուտ իրենց։ Նման իրողության ակնհայտ օրինակ եղան արցախյան առաջին պատերազմի տարիները, որի հաղթական ելքը Հայաստանի համար առաջին հերթին մինչև եզրային սահմանը պրկված ազգային ու ռազմական ներուժն էր։

Բավականաչափ համակարգված չէր հատկապես մարդկային ուժի մոբիլիզացման գործընթացը։ Կամավորական խմբերի՝

առաջնագիծ մեկնելու առաջին ալիքին ընդառաջ գնալով, հաշվի չառնվեց այն հանգամանքը, որ ժամանակակից պատերազմներում ավելի մեծ հաջողության կարելի կլինի հասնել միայն կանոնավոր բանակի հստակ մշակված ու հիմնավորված ռազմական գործողություններով: Հետագայում մարդկային ռեսուրսների մոբիլիզացման գործընթացն արդեն դժվար էր բնականոն հունի մեջ գցել, քանի որ խուճապային տրամադրությունները սկսեցին խոչընդոտել նաև սահմանված կարգով մոբիլիզացման ենթակա անձանց հավաքագրմանը:

Հիմնավոր գնահատականներ չէին տրվել նաև հակառակորդի հնարավորություններին, և երկրի ռազմական ուժերը չէին նախապատրաստվել նոր սերնդի պատերազմներին: Մասնավորապես, Իդլիբում թուրքական ԱԹՍ-երի երամով հաջող մի քանի ռազմական գործողությունների վերլուծությունը պիտի մղեր կարճ ժամանակահատվածում Հայաստանի և Արցախի զինանոցը հարստացնել դրանց դեմ արդյունավետ պայքարի միջոցներով, հատկապես եթե հաշվի առնենք, որ փորձագիտական շրջանակները բազմիցս զգուշացրել էին, որ նոր պատերազմում Ադրբեջանը ամենայն հավանականությամբ լայնորեն կիրառելու է թուրքական ԱԹՍ-երի երամներ[35]:

Հաջորդ կարևոր հանգամանքը, որը հաշվի չէր առնվել, դա տարածաշրջանում գլխավոր ակտորների քաղաքական շահերի փոփոխությունն էր, ինչպես նաև՝ դրանց ռազմական հզորությունների միջև բալանսի փոփոխությունը: Միաժամանակ, 2018 թվականին Հայաստանում տեղի ունեցած «թավշյա» հեղափոխությունը, որի արդյունքում իշխանության եկած նոր ուժերը ձգտում էին Հայաստանն անկախ տեսնել տարածաշրջանային ակտորների ազդեցությունից: Մինչդեռ, «դաշնակցային» հարաբերությունները, նույնիսկ ամենավստահելիները, ենթադրում են կախվածության ինչ-որ աստիճան առավել հզոր դաշնակցից, այլապես նման հարաբերությունները կարող են «վերանայվել» ամենաանհարմար պահին:

---

[35] **Վահե Սարուխանյան**, Համարում եմ, որ տավուշյան այս թեժացումը կապված է Ռուսաստան-Թուրքիա գազային սուր կոնֆլիկտի հետ, 2020թ, հուլիս, https://hetq.am/hy/article/119584 (18.07.2020)

Փաստորեն, պետության ռազմական հզորության՝ կոկրետ արդյունքների կերպափոխման գործընթացը, որը պիտի հաջողություն արձանագրեր ճիշտ կազմակերպված մոբիլիզացիայով, դարձավ պատերազմի ելքը վճռող էական գործոններից մեկը։ Անհրաժեշտ է կարճ ժամանակահատվածում էապես փոխել պետական կառավարման գրեթե բոլոր համակարգերը (կրթություն և գիտություն, տնտեսություն, ֆինանսներ, սոցիալական քաղաքականություն, առողջապահություն, Զինված ուժեր) , վերանայել արտաքին քաղաքականությունը, վերակառուցվել որպես պետություն և կորցրածը հետ բերել։

Armenia's military strength and mobilization potential

GAYANE HARUTYUNYAN
National Defense Research University, MOD, RA

The article examines the issue of state military power, the impact and significance of mobilization potential in terms of the deployment of military power and the solution of the security problems facing the state, drawing upon the example of the South Caucasus states. To this end, the article first analyzes and presents different approaches to the definition and assessment of state military power, further it proposes a new methodology of assessment used to assess and compare the military capabilities of the South Caucasian states. The issue of Armenia is considered in more details from the point of view of realizing the mobilization potential, taking into account the new realities of the Armenian-Azerbaijani war. The peculiarities of the mobilization process in Armenia are discussed in 12 interrelated directions: legal powers, finances, environment, transport, human resources, financial means and facilities, buildings, production base, educational base, health care services, telecommunications, allies support.